

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-Ի ՐԵՄԵՆՆԵՐ

● Եր. 3 Սեպտ. — Է. օր Վերաի. : Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանի ձախակողմեան Ս. Աստուածածնի խորանին վրայ : Պատարագին էր Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան :

● Կիր. 4 Սեպտ. — Ը. օր Վերաի. : Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարութիւն, մեր վերնատան երաշխաւոր Ս. Աստուածածնի մատրան մէջ : Պատարագեց լոգ. Տ. Գեորգ Արդ. Նազարեան :

● Բշ. 5 Սեպտ. — Վաղուան նախատեսակին ի Ս. Զակոր նախագահեց Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան :

● Գշ. 6 Սեպտ. — Ս. Յովակիմայ եւ Աննայի : Ս. Պատարագը Գեթեմանի Ս. Աստուածածնայ Տաճարի Հայր Յովակիմի գերեզմանին վրայ մատուցուեց : Ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Լոգ. Տ. Գեորգ Արդ. Նազարեան :

● Եր. 10 Սեպտ. — Վաղուան նախատեսակը պաշտուեցաւ ի Ս. Զակոր : Հանդիսացան էր Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան :

● Կիր. 11 Սեպտ. — Գիւս Գօսոյ Ս. Աստուածածնի : Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ : Պատարագեց Գեր. Տ. Պարգև Ի. Վրդ. Վրթանէսեան : Հանդիսաւոր երթ ու դարձին նախագահեց Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան :

● Կիր. 18 Սեպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարութիւն, մեր վերնամատրան մէջ : Պատարագեց լոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան :

● Գշ. 20 Սեպտ. — Վաղուան հանդիսաւոր նախատեսակին ի Ս. Զակոր նախագահեց Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան :

● Գշ. 21 Սեպտ. — Եմնուց Ս. Աստուածածնի : Առաւօտուն, Գեր. Տ. Նորայր Սրբազանի գլխաւորութեամբ, ամբողջ Միաբանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Գեթեմանի պարտէզը ու շրջապատը : Հանդիսութեամբ մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ հանդիսաւորապէս պատարագեց և աւուր պատշաճի քարոզ մը խօսեցաւ Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան :

● Եր. 24 Սեպտ. — Ի Ս. Զակոր պաշտուած խաչվերացի հանդիսաւոր նախատեսակէն ետք, Ս. Խաչափայտի ճահնչազեղ մատուցը թափօրով փոխադրուեցաւ Աւագ Սեղան, ձեռամբ հանդիսացան Տեղապահ Ս. Լոր :

— Իրիկնաղէմին, Մայր Տաճարին մէջ, Գեր. Տ. Տիրան Ս. Արքեպս. Ներսոյեան նախագահեց եկեղեցւոյ և Հոկման սրտազրաւ կարգերուն :

● Կիր. 25 Սեպտ. — ԽԱՉԱՎԱՐՈՅ : Մայր Տաճարին մէջ մեծ հանդիսաւորութեամբ Ս. Պատարագը մատուց Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեան և քարոզեց, Նիւթ ունենալով խաչին խորհուրդն ու անոր հասկացողութիւնը իւրաքանչիւր քրիստոնեայի համար : Ներկայացուց խաչը իրեն խորհրդանիշ զոհողութեան և անձեռնադրութեան, յատկութիւններ՝ առանց որոնց ոչ մէկ կազմակերպութիւն կրնայ շարունակել իր գոյութիւնը : Քարոզէն ետք, Գեր. Տեղապահ Ս. Լոր նախադասութեամբ կատարուեցաւ տարեկան հանդիսաւոր հոգեհանգստեան կարգը, Ս. Աթոռոյս և աղփիս բարեբարներ Կարապետ և Գրիգոր Մեղրեաններուն, ինչպէս նաև Նորոգ հանգուցեալ ազգային բարեբար Տրդատ Թիւրաթեանի հոգիներուն ի հանդիստ :

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ խաչվերացի մեծահանգէս Անդաւտանը, ի ներկայութեան Ժողովուրդի ստուար բազմութեան : Կը հանդիսացան էր Գեր. Տեղապահ Ս. Լայր :

● Բշ. 26 Սեպտ. — Յիւսակ մեղեց : Ս. Պատարագը ի Ս. Գլխաղի մատուց լոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան : Ապա, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտոն, նախ Մայր Տաճարին մէջ, ապա դուրսէն՝ Երանայնոր՝ Տ. Կիրիլ Ս. Պատր. Լոր շիրմին վրայ, ինչպէս նաև Զամ-Թաղի գերեզմանավայրին մէջ :

● Եր. 1 Հոկտ. — Տօն Խաչի : Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնամատրան մէջ : Պատարագեց լոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան :

● Կիր. 2 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարութիւն, մեր վերնամատրան մէջ : Պատարագին էր Անթիլիասի Միաբաններէն հիւրաբար Ս. Աթոռ գտնուող լոգ. Տ. Եանէ Վրդ. Անէմեան :

● Ուր. 7 Հոկտ. — Վաղուան նախատեսակը պաշտուեցաւ Դպտոց Ս. Գեորգ եկեղեցւոյն մէջ : Երթ ու դարձին և արարողութեանց հանդիսացան էր Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան :

● Եր. 8 Հոկտ. — Տօն Ս. Կեղեղայ զօրավարին : Մայր Տաճարի մէջ պաշտուած առաւօտեան Ժամերգութեանէն ետք, Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Դպտոց Ս. Գեորգ եկեղեցին, ուր Ս. Պատարագը մատուց լոգ. Տ. Գեորգ Արդ. Նազարեան : Քարոզեց Անթիլիասէն հիւրաբար քաղաք գտնուող Գեր. Տ. Տաճատ Ի. Վրդ. Ուրֆայեան, բնաբան ունենալով Վեհ զուք եղերութեամբ կատարեալը, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է, ու անդրադառնալով բարի երիտասարդին Յիսուսի հանդիպման դրուագումին, եզրակացուց թէ կատարելութիւնը հոգեկան խորունկ իղծ մըն է մարդուն համար, երանութիւն մը՝ որուն պիտի չկրնանք տիրանալ սակայն օրէնքներու տառա-

կան զործադրութեամբը լուի։ Ս. Պատարագէն ետք, Միարանութիւնը պատուաբերուեցաւ Դեպտոսը Հոգեւոր՝ Տեսչէն։

— Կէսօրէ ետք, Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսիսեան իր լիաւորութեամբ, Միարանութիւնը ճշգրտաբար մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար։ Վաղուան նախատեսակը պաշտուեցաւ Տաճարի մեր վերնամասերն մէջ։

● Կիր. 9 Հոկտ. — Տօն Վարդապ Ս. Խաչին։ Ս. Յարութեան Տաճարի Բ. Գողգոթայի մեր վերնամասերն մէջ պաշտուած առաւօտեան ժամերգութեան ետք, Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսիսեան մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և ճշտ առաւելէն առաջ քարոզեց, Ներկայացնելով կեանքն ու գործը Նորընտր. Տ. Ս. Վաղգէն Ա. Կաթողիկոսին։ Խօսելով Հայց. Եկեղեցւոյ զերի մասին, յորդորեց Ներկաները որ սիրեն զայն՝ որովհետեւ ան եղած է մեր փրկութեան տապանն ու հարազատ անդամը Տիեզերական Եկեղեցւոյ։ Ու մաղթեց որ Տէրը անձնուէր առաջնորդները անպակաս ընէ մեր Եկեղեցիէն, որոնք պիտի կրնան առաջնորդել մեր ժողովուրդը զէպի խաղաղութեան ափունքը։ Քարոզէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմանճեանի նախագահութեամբ կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանդիստ. Երանանոր Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի հոգւոյն համար, որմէ ետք առաջին անգամ ըլլալով յիշատակուեցաւ Տ. Տ. ՎԱՁԳԷՆ Ա. Ե իբրև Կաթողիկոս Ամենայն Հայոց։ Կատարուեցաւ նաև Հայրապետական մաղթանք, որուն ընթացքին Տաճարին բլուր հայկական դանդերն ու կոշտակները զուարթօրէն կը նշէին։

● Եր. 15 Հոկտ. — Քրիստոսի 72 աւելիեաց տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գաւիթը՝ Ս. Գեորգայ սեղանին վրայ, Պատարագին էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։

● Կիր. 16 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ։ Պատարագին էր Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գալարանեան։ Տէր Ողորմեայէն առաջ, Գեր. Տ. Տիրան Արքեպս. քարոզեց, բնարան ունենալով օրուան ծառայութեան ծառայողներն ու ինչ հակառակ կալ ընթերցուածէն «Ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճշմարտութեանն» (Բ. Կորնթ. ԺԲ. 8), Բացատրեց թէ աշխարհ ինչ ողբալի վիճակ մը կ'ունենայ և ինչպէս մարդկային ընկերութիւնը կը քայքայուի եթէ փոխադարձ սէրն ու վստահութիւնը վերնայ մարդոց մէջէն, ու մէկը չնստատայ միւր վերաբերման։ Սակայն, ինչպէս կ'ըսէ առաջին խօսքերուն։ Սակայն, ինչպէս կ'ըսէ առաջին խօսքերուն, վստահի ան ինքնին կ'աղաղակէ ու կ'արտայայտէ ինքզինքը։

● Ուր. 21 Հոկտ. — Թարգմանչաց Վարդապետան հանդիսաւորապէս պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսիսեանի։

● Եր. 22 Հոկտ. — Տօն Ս. Թարգմանչաց Վարդապետան։ Հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Առաջ Սեղանին վրայ մատոյց և քարո-

զեց Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, եղբայրացնելով թէ Թարգմանիչներու գործը խոշոր ճիգ մըն էր, երևան բերելու համար խկական պատկերը հայ հոգիին։ Ս. Պատարագէն ետք, Գեր. Տեղապահ Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտոն։ Ս. Աթոռոյս հանգուցեալ բարեբար Գալուս Կիլիկեցիէն, իր տիկնոջ նուազի և ծնողաց Սարգիս և Տիմոնի հոգիներուն համար։ Ապա, Միարանութիւնը բարձրացաւ Տեղապահ Ս. Հօր մօտ, շնորհաւորելու համար ն. Գերապատուութեան անուան տօնը։

● Կիր. 23 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան, մեր վերնամասերն մէջ։ Պատարագեց Տաճարին Տեսուչը՝ Հոգ. Տ. Հայկասէր Վրդ. Գալարանեան։

● Եր. 29 Հոկտ. — Ս. Աւետարանչաց տօնին առթիւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւիթը՝ Ս. Թովհանէկ Աւետարանչի մատրան մէջ։ Պատարագեց Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գալարանեան։

● Կիր. 30 Հոկտ. — Մայր Տաճարին մէջ հանդիսաւորապէս պատարագեց և քարոզեց Գալիֆօրնիոյ թեմին Առաջնորդ Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան, հաստատելով այն ճշմարտութիւնը թէ այն որ յայր Տիրոջ Տիրոջ վրայ կը զնէ, պիտի չկորսուի, այլ պիտի գտնէ իր փրկութիւնը, ու իբր ապացոյց մատնանչեց պարզան մեր ժողովուրդին։ Ու իր խօսքերը համեմատեց մեր վերածաղկեալ Հայրենիքէն իր կրած տպաւորութիւններով։

● Բշ. 31 Հոկտ. — Ս. Յովսէփ Աստուածօր տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարի Հայր Թովհէփի գերեզմանին վրայ, Պատարագեց, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգ. Տ. Գեորգ Աբեղայ նաղարեան։

ՊԱՇՏՈՆ ԱՆՈՆԷՐ

● Եր. 3 Սեպտ. — Կէսօրէ առաջ, Հոգ. Տ. Վաղգէն Արդ. Գրգորեան մեկնեցաւ Սիւրիա-Լիբանան, ի տես իր ծնողաց և վերադարձաւ Եշ. 29 Սեպտ. ի կէսօրէ ետք։

● Դշ. 7 Սեպտ. — Կէսօրէ ետք, Ամերիկահայոց նախկին Առաջնորդ և Ս. Ուստիս Միարան Գեր. Տ. Տիրան Ս. Արքեպս. Ներսիսեան, օղային գծով ժամանեց Ս. Աթոռ։

● Ուր. 9 Սեպտ. — Կէսօրէ ետք, Զրօսաւոր իրականութեան Գրասենեակի Տնօրէնին կողմէ, Հնադիտական Վարչութեան օրակին մէջ տրուած թէյառարանին ներկայ եղաւ Տիր. Կ. Հինգիսեան։

● Եր. 10 Սեպտ. — Կէսօրէ ետք, Ս. Ուստիս Միարան Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան ժամանեց Ս. Աթոռ։

● Եշ. 15 Սեպտ. — Առաւօտուն, Քաղաքիս իտալական Ընդհ. Հիւպատոսը իր մեկնման առ-

թիւ հրաժեշտի այցելութեան եկաւ Պատրիարքարան։

● Եր. 17 Սեպտ. — Առաւօտուն, Գաղաքիս նորընտիր իտալական շիւղատես Mr. Pier Quirino Tortorici իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանին։

● Դշ. 21 Սեպտ. — Առաւօտուն, Սինէմա էլ Լամբայի մէջ, Ն. Վ. Լիւսէյն Թագաւորի նախագահութեամբ տրուած Միջաբարական երկիրներու համալսարանականներու համագումարին ներկայ եղան Գեր. Տեղապահ Ս. Լայրը, Լոգ. Տ. Զաւէն Վրդ. Ձինչինեան և Տիար Կ. Լինդլեան։

● Ուր. 23 Սեպտ. — Առաւօտուն, Գեր. Տեղապահ Ս. Լայրը, ընկերակցութեամբ Լոգ. Տ. Զաւէն Վրդ. Ձինչինեանի, փոխ-այցելութիւն տուաւ նորընտիր իտալական շիւղատեսին։

— Նոյն առաւօտուն, Պատրիարքարան այցի եկան Պելճիքական հին և նոր շիւղատեսները, մին իր հրաժեշտը առնելու, իսկ միւսը իր առաջին այցելութիւնը տալու համար։

● Կիր. 25 Սեպտ. — Կէսօրէ ետք, Orient Houseի սրահներուն մէջ, Երուսաղէմի Արար Ազգային Դատի Պաշտպանութեան Գրասենեակի բացման առթիւ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, Լոգ. Տ. Զաւէն Վրդ. Ձինչինեան և Տիար Կարպիս Լինդլեան։

● Եշ. 29 Սեպտ. — Առաւօտուն, Գեր. Տեղապահ Ս. Լայրը և Գեր. Տ. Տիրան Արքեպիսկ. Ներսիսեան վանական գործերով մեկնեցան Իսրայէլ և վերադարձան Բշ. 3 Հոկտեմբերի Կ. Վ.։

● Ուր. 30 Սեպտ. — Կէսօրէ ետք, Ս. Աթոռ վերադարձաւ Լոգ. Տ. Լայկասեր Վրդ. Պայրամեան, որ Օդոստոսի սկիզբները արձակուրդով մեկնած էր Սիւրիա-Լիբանան։ Իրեն կ'ընկերանային Անթիլիասի Միաբաններէն Գեր. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Ուրֆայեան և Լոգ. Տ. Շահէ Վրդ. Աճէմեան։

● Եր. 1 Հոկտ. — Կէսօրէ ետք, American School of Oriental Researchի դպրոցական տարեւըջանի բացման առթիւ տրուած ընդունելութեան ներկայ եղան Լոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, Լոգ. Տ. Զաւէն Վրդ. Ձինչինեան և Տիար Կարպիս Լինդլեան։

● Գշ. 4 Հոկտ. — Առաւօտուն, Գեր. Տեղապահ Ս. Լայրը, ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ժառ. Վարժ. և Ընծայարանի 1955-56 դպրոցական տարեւըջանին։ Նախորդ օրը վերաբացուած էր արդէն Ս. Թ. Վարժարանը։

● Դշ. 5 Հոկտ. — Կէսօրէ ետք, Գեր. Տեղապահ Ս. Լայրը օղային գծով մեկնեցաւ Անթիլիաս։ Իրեն կ'ընկերանային Անթիլիասի Միաբաններէն հիւրաբար Ս. Աթոռ գտնուող Լոգ. Տ. Շահէ Վրդ. Աճէմեան և Լոգ. Տ. Ներսէս Արեղայ փառաւորներ։ Տեղապահ Սրբազանը վերադարձաւ չարաթ մը ետք։

● Բշ. 10 Հոկտ. — Առաւօտուն, Անթիլիասի Միաբաններէն Գեր. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Ուրֆայեան, որ տասը օրերէ ի վեր հիւրաբար Ս. Աթոռ կը գտնուէր, վերադարձաւ Անթիլիաս։

● Ուր. 14 Հոկտ. — Առաւօտուն, Գեր. Տե-

ղապահ Ս. Լայրը, ընկերակցութեամբ Լոգ. Տ. Զաւէն Վրդ. Ձինչինեանի և Տիար Կ. Լինդլեանի, փոխ-այցելութիւն տուաւ Պելճիքական նորընտիր Բեդ. Լիւստոս M. Alain de Thysebaertի։

● Գշ. 18 Հոկտ. — Առաւօտուն, Երուսաղէմի նորընտիր Գաղաքապետ Տիար Արէֆ էլ Արէֆ, քաղաքապետական կազմով, իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանին։

● Կիր. 23 Հոկտ. — Առաւօտուն, Գեր. Տեղապահ Ս. Լայրը օղային գծով մեկնեցաւ Պելճիքական վերադարձաւ յաջորդ օրը Կէսօրէ ետք։

● Բշ. 24 Հոկտ. — Երեկոյան, Ս. Աթոռոյս նորապսակ եպիսկոպոսներուն հետ ժամանեցին Ամերիկահայոց Առաջնորդ Գեր. Տ. Մամբրէ Արքեպս. Գալֆայեան և Ս. Ուստիս Միաբան Լոգ. Տ. Իսահակ Վրդ. Դազարեան։

● Դշ. 26 Հոկտ. — Կէսօրէ ետք, Գեր. Տ. Մամբրէ Արքեպս. Գալֆայեան և իրեն ընկերացող երկու Ամերիկահայ պատգամաւորները օղային գծով մեկնեցան Եդիպտոս։

— Նոյն ատեն, Էլճիմաճինէ վերադարձին, Ս. Աթոռ ժամանեց Ս. Ուստիս Միաբան և Պուէնոս Այրէսի Լոգիկոս Լոյիւ Լոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան։ Իրեն կ'ընկերանային Լար. Ամերիկայի պատգամաւոր Տէր և Տիկ. Սահակ Պաղչէճեան։

● Եշ. 27 Հոկտ. — Կէսօրէ ետք, American Colonyի նոր վերաբաժանական ճիւղի բացման հանդէսին ներկայ եղան Լոգ. Տ. Զաւէն Վրդ. Ձինչինեան և Տիար Կարպիս Լինդլեան։

● Եր. 29 Հոկտ. — Կէսօրէ առաջ, Լոգ. Տ. Վարուժան Վրդ. Գապարահան արձակուրդով մեկնեցաւ Սիւրիա-Լիբանան։

● Բշ. 31 Հոկտ. — Կէսօրէ ետք, ընդառաջելով Եթովպահայ Գաղութային Ժողովի առաջարկին, Գեր. Տեղապահ Ս. Լայրը օղային գծով մեկնեցաւ Աթիւ-Ապպա, Եթովպիոյ Լայիւ Սէլասիէ Ա. Կայսեր թագադրութեան 25ամեայ Յուբիլեանին առթիւ կատարուելիք հանդիսութեանց հայկական բաժնին նախագահելու և այդ առթիւ այցելելու Եթովպահայ պատուական դաղութը։

— Նոյն ատեն, Ս. Աթոռոյս նորապսակ եպիսկոպոսներէն Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան (Առաջնորդ Գալֆայեանի թեմին), օղային գծով մեկնեցաւ զէպի Ֆրէզնո։

ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿՍԻԱԳՈՑ

Ուր. 9 Սեպտ. ի երեկոյան ժամերգութեան ետք, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Գեր. Տեղապահ Ս. Լայրը կիսասարկաւազութեան աստիճան շնորհեց Ժառնգ. Վարժարանի քառամեայ ընթացքը բոլորած Ուրարակիր Տէր. Վարուժան Արշիւանի և Կարապետ Գապաղեանի։

Յաջորդ օրը, ի ժամ Ս. Պատարագի, առաջնորդութեամբ Ժառնգ. Վարժարանի և Ընծայարանի Տեսուչ Տ. Լայկազուն Ծ. Վրդ. Արքահամանի, երկուքն ալ Տեղապահ Սրբազանին

ձեռնադրուեցան Աւագ Սարկեաւոյ։ Սրտառու էր պահէր երբ երկուքն ալ ծնկալուք, կարմիր բազմաբարձրներ իրենց ձեռքերուն ա կը բարձրանային Աւագ Սեդան ու ապա ձեռամբարձ իրենց հրաժարումը կը յայտնէին աշխարհային կենցաղէն։ Նորընծաները անմիջապէս սկսան սպասարկել Ս. Սեդանին։ Այս առթիւ, Գեր. Տիրան Արքեպոս. Ներսիսեան քարոզեց, Ս. Եկեղեցւոյ ծառայութեան և Աստուածային շնորհին մասին։

Ստորեւ՝ իրենց ամիսով կենսագրութիւնը։

Վարուժան Սրկ. Արեւիկեան ծնած է 1935ին, Պէյրութ։ Մանուկ հասակէն ընտանեօք կը փոխադրուին Յոյակէ, հոն կը յաճախէ Ս. Գլխադրի վարժարանը։ Պաշտօնի ղեկավարուեալ նետանքով Լիբանան գաղթած ատեն արկածով մը կը կորսնցնէ իր ծնողքը։ Կը մտնէ Հալէպի Ս. Քառասուն Մանկանց վարժարանը, ուր մնացած է մինչև 1952, երբ երեսնադէմ գալով կ'աշխատէր Ս. Աթոռոյս ժառանգ. վարժարանին, ընդունուեալով Բ. Դասարան։ Վարժարանի ընթացքը աւարտած է այս տարի փայլուն յաջողութեամբ։

Կարապետ Սրկ. Գալպակեան ծնած է Հալէպ 1935ին։ Յաճախած է ծննդավայրին Վարդանեան և Մեսրոպեան վարժարանները, ու ապա կիւլպէնկեան Ազգ. Երկսեռ վարժարանը, զոր աւարտած է 1951ին և նոյն տարին ընդունուած է Ս. Աթոռոյս ժառ. վարժարանը, որուն քառամեայ ընթացքը այս տարի կ'աւարտէ յաջողութեամբ։

Ժառանգ. վարժարանը տուաւ իրենց կոչման զօրակից, մի քան անձնուէր Սարկեաւոյն, յանձինս Վարուժանի և Կարապետի։ Այժմ երկուքն ալ կը հետևին Ս. Աթոռոյս Ընծայարանի դասընթացքներուն, ինչպէս նաև ստանձնած են դասեր ժառ. վարժարանի խոնարհ դասարաններուն մէջ։

ՀԱՅ ԵՐԿԻ ՀԱՆՃԱՐԵՂ ՎԱՐՊԵՏ

ԿՈՄԻՏԵՍ ՎԱՐԿԱՊԵՏԻ

ՄԱՀՈՒՆ ԲՈՒՆԱՄԱՐԵՂ

Շարաթ, 29 Հոկտ. ի երեկոյեան, քաղաքիս Հ. Ե. Միութեան սրահին մէջ պատշաճ հանդիսութեամբ տեղի ունեցաւ յիշատակի երեկոյթ մը, նուիրուած՝ Կոմիտաս Վարդապետի մահուան քսանամեակին։ Հանդիսութեան կը նախագահէր Գեր. Տ. Տիրան Արքեպոս. Ներսիսեան։

Մատակարարէս երկու ժամ տեղողութեամբ, իրագործուեցաւ նոյն և մասնաւոր հոգածութեամբ պատրաստուած յայտագիր մը։ Տեղի ունեցան արտասանութիւններ, մեներգներ և խմբերգներ Հ. Ե. Միութեան երգչախումբին կողմէ և զինկավարութեամբ Տիրան Սահակ Գալպակեանի։ Երգչախումբին կ'ընկերակցէր զաւնակի վրայ Օր. Թադուհի Բուրճեան։

Հօգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան բանաստեղծութեամբ մը ներկայացուց երաժիշտը իբրեւ համադրող, զաւնասորող, գիտուն, պրպտող եր-

գիշ և ստեղծագործ արուեստագէտ մը։ Արդարեւ, բանախօս Հօգ. Հայրսուրբը հմտութեամբ և իր ներքին բացարձակ տիրութեամբ գրեթէ ժամ մը բոլոր ներկաներու ուշադրութիւնը հրաւիրելով, խօսեցաւ Կոմիտաս Վարդապետի բաղժանկարմանի և հրաշալի արուեստին մասին։

Ներկաները զոհուեալ և երջանիկ մեկնեցան սրահէն, իրենց հետ տանելով խորապէս ապրուած և վայելուած հաճոյքը Կոմիտաս Վարդապետի երգերուն և Հայ մշակոյթի մէկ կարևոր երեսը կազմող Հայ երգի մասին ... հպարտանքով։

ՍԱՀԻՄԱԿԱՆ ԳՐՈՆԻՒ

Կիրակի, 30 Հոկտեմբերի երեկոյեան ժամը 7.30ին, Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ, տեղի ունեցաւ հանրածնով Բէմանչիստ Ռուբէնի նուագահանդէսը, հովանաւորութեամբ Պատր. Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ Արքեպոս. Տէրատէրեանի։ Յարգելի և տաղանդաւոր Բէմանչիստին կ'ընկերակցէր զաւնակի վրայ նոյն քան տաղանդաւոր Համ. Տիկ. Ռուբէն։

Գեղեցկօրէն յղացուած յայտագրի մը վրայէն, իրար ետեւ և իրագործուեցան Կովկասեան ժանրէի, Անուշապետ երգեր՝ Սայեաթ Կոմիտէն, Մայիլեանի Ուր-ճուր և Արեւելեան Ուստադան Սիւն, գրուած Բէմանչիստի կողմէն։

Յայտագիրը ունէր նաև երկրորդ մաս մը, կազմուած զուտ հայկական երգերէ և յատկապէս նշանաւոր հեղինակներէ. օրինակ, Խմբիկ և Ալվարէլ՝ Բարիստղարեանէ, Գառն և Ծովիկ՝ Կոմիտաս Վրդ. էն, Լեզիկիկա՝ Խաչատուրեանէն և Անուր՝ Տիրգրանեանէն։

Կովկասեան Ֆանթէզիկն թէև նուագուեցաւ ապրումով, այսուհանդերձ ճարտար նուագածուն՝ Ռուբէն, չբարձրացուց զայն միւս կտորներուն վարպետութեամբ և ներշնչումով տրուած եղանակներուն։

Ինչեքայի հազներգութիւնը նուագուեցաւ հասկացողութեամբ և արուեստով, խորապէս յուզելով ներկաները։ Տիկ. Ռուբէն գերազանցեց ինքզինքը։ Սայեաթ Կոմիտէն նուագուածներուն մէջ կային անուշ եղանակներ, ինչպէս յաճախ կը պատահէ մեղ վայելել ազգային երգեր և մեներգները։ Իսկ Մայիլեանի Ուր-ճուր, որ վարպետութեամբ նուագուեցաւ, յուզիչ էր և երեսուն բերան յարգելի նուագողին կարողութիւնը։

Լեզիկիկան ընդունուեցաւ ծափերով և ժողովուրդը խնդրեց անոր կրկնումը։

Ռուբէնի արուեստը իր քեմանչային վրայ, երբեմն լազող, երբեմն յուզող և յաճախ խառնաշաւառող, կենսքով լեցուն երաժշտութիւն մըն է, որ անգամ մը ևս կը տանի մեզ մեր հայրենական երբեմնի երջանիկ, լենչող ու զուարթ կենսքի ապրումներուն, ուր աշուղներ կը զօվերգէին Հայրենիքի փառքը և շքաշունքը՝ և ընդհանրապէս սէրն ու գինին։

Ջ.